Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 1

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստի

12.01.2018թ. | ք. Երևան
Ժ. 11.00 | ՀՀ ԱՍՀՆ նիստերի դահլիճ

Մասնակցում էին՝

Կոմիտեի նախագահ՝ Ա. Ասատրյանը

Կոմիտեի անդամներ՝ Ա. Պետրոսյանը, Շ. Հարությունյանը, Թ. Ավետիսյանը, Ս, Սահյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Տերտերյանը

Բացակայում էին՝ Ռ. Սմբատյանը

Հրավիրված էին՝ Դ. Հակոբյանը, Ն. Սարգսյանը, Ռ. Սմբատյանը, Ա. Սաֆարյանը, Ա. Դանիելյանը, Ա. Մանգասարյանը, Ա. Մինասյանը, Լ. Հայրապետյանը, Ա. Մանվելյանը, Ա. Կեսոյանը, Հ. Մուրադյանը, Ժ. Սարգսյանը, Ս. Զաքարյանը, Ա. Բարսեղյանը, Ա.Ավետիսյանը, Զ. Ջհանգիրյանը, Ս. Թադևոսյանը, Ռ. Արզումանյանը, Ա. Ներսիսյանը, Գ. Գրիգորյանը, Լ. Անտոնյանը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (այսուհետ՝ Նախարար), կոմիտեի նախագահ Ա.Ասատրյանը նիստի սկզբում հղում կատարելով օրակարգում ընդգրկված և ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կազմված հաշվետվություններին՝ հստակեցրեց մասնակիցների կողմից դրանց վերաբերյալ ունեցած առաջարկությունները: Մասնակիցների կողմից օրակարգի վերաբերյալ առաջարկություններ չհնչեցին, որի արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ** հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 2018 թվականի հունվարի 12-ի նիստի հետևյալ օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 12.01.2018թ. նիստի

1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 04 խմբի 01 դասի «13. Երեխաների խնամքի

ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

2. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի «02. Աշխատաշուկայում անմրցունակ անձանց տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում», «11. Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում», «16. Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում», «15. Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրերի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 04 խմբի 01 դասի «13. Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրի ներքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Շ. Հարությունյան, Ս. Թադևոսյան, Ա. Մանվելյան)

Ս. Տերտերյանը ներկայացնելով օրակարգի 1-ին հարցը՝ անդրադարձավ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի «13. Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքներին՝ արձանագրված թերություններին և ներկայացված առաջարկություններին:

Ս. Տերտերյանը ներկայացրեց, որ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում գործող երեխաների ցերեկային խնամքի 4 կենտրոնի 84 աշխատակցի միջոցով իրականացնում է՝ սոցիալ-հոգեբանական, կրթական և առողջապահական աջակցության կարիք ունեցող ամսական միջին 600 երեխայի սպասարկում: Նշեց նաև, որ կազմակերպության կողմից երեխաների կենտրոն այցելությունների վարվող մեթոդաբանությունը հաստատված չէ նախարարության կողմից, միաժամանակ հավելեց, որ անհրաժեշտ է առաջնորդվել 2015 թ. հոկտեմբերի 17-ի Հայաստանի Հանրապետության կառավարության N 1112 որոշմամբ սահմանված ձևաչափով, այսինքն՝ վերոնշյալ Կազմակերպությունում չպետք է սահմանափակվի երեխաների այցելությունների քանակը, այլ կազմակերպել դա ինչպես ՀՀ ԱՍՀՆ նախարարության ենթակայությանը հանձնված

խնամք և սպասարկում իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններում (այսուհետ՝ ՊՈԱԿ)՝ ըստ հաշվառված երեխաների թվաքանակի:

«Հույսի կամուրջ» ՀԿ-ի նախագահ Ս. Թադևոսյանը նշեց, որ երեխաների կարիքների գնահատումից է առաջանում երեխաների կենտրոններ հաճախելիության հաշվառումը:

Վերոնշյալ հարցի կապակցությամբ Ս. Թադևոսյանը նշեց, որ Կազմակերպության կողմից երեխաների կարիքների գնահատումը իրականացվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքի գնահատման թերթիկներով, որը հաստատված է Նախարարության կողմից: Միաժամանակ հավելեց, որ, ըստ այդմ էլ մշակվել է երեխայի անհատական զարգացման պլանը՝ ըստ երեխայի կարիքի, մատուցվելիք ծառայությունների քանակի և ծառայություններից օգտվելու հաճախելիության: Վերջինիս արդյունքում որոշվել է երեխայի ծառայությունների մատուցման գրաֆիկը, որի արդյունքում ձևավորվել է Կազմակերպության ընդհանուր ծառայությունների մատուցման գրաֆիկը: Այնուհետև Կազմակերպության և ՊՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների համեմատությանն անդրադառնալով՝ ընդգծեց, որ էական տարբերությունը այն է, որ կազմակերպությունում բացակայում է սնունդ տրամադրելու գործառույթը:

Նախարարի հարցին ի պատասխան՝ Ս. Տերտերյանը հավելեց, որ կազմակերպության 4 կենտրոններում բացակայում է երեխաների դասապատրաստման գործընթացը, միաժամանակ ընդգծելով, որ այդ գործընթացն ամրագրված է 2015թ. հոկտեմբերի 29-ի ՀՀ կառավարության 1292-Ն որոշմամբ:

Ասվածին ի պատասխան Լ. Հայրապետյանը հաստատեց, որ չնայած Կազմակերպությունում դասապատրաստման գործընթաց չի իրականացվում, սակայն ընդհանուր զարգացվածության ծրագրերն իրականացվում են համապատասխան խմբակների միջոցով:

Ս. Թադևոսյանը ընդգծեց, որ կազմակերպության մասնագետները սկզբունքորեն չեն անդրադառնում դասապատրաստման գործընթացին, քանի որ Կազմակերպության մեթոդաբանությունն ուղղված է երեխաների կարողությունների և ինքնուրույն սովորելու հմտությունների զարգացմանը: Միաժամանակ հավելեց, որ դասապատրաստումը մեխանիկական գործընթաց է, որը որևէ դրական ազդեցություն չի թողնում երեխայի կրթության համատեքստում:

Նախարարը նշեց նաև, որ գնահատված կարիքը պետք է լինի անհատական, հստակ և լիարժեք, այսինքն՝ ոչ միայն երեխայի կարիքի գնահատում պետք է իրականացվի, այլև վերջինիս ընտանիքի:

Այնուհետև Նախարարն առաջարկեց Ս. Թադևոսյանին հստակեցնել յուրաքանչյուր երեխայի անհատական զարգացման ծրագրի կազմման, ինչպես նաև այցելությունների սխեմայի պլանավորման ժամանակահատվածը:

Նախարարի առաջարկին ի պատասխան Ս. Թադևոսյանը նշեց, որ երեխաների կարիքները գնահատվում են եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքով, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

Կազմակերպության մեթոդաբանությանը, մասնավորապես՝ անհատական սոցիալական ծրագրերը իրականացնելու, երեխաների և վերջիններիս ընտանիքների հետ աշխատելու գործընթացներին անդրադառնալով՝ Նախարարը ընդգծեց, որ վերոնշյալ գործընթացները պետք է նույն ձևաչափով կիրառվեն ՊՈԱԿ-ներում, որոնք էլ ավելի կնպաստեն ծախսարդյունավետության բարձրացմանը և հետագա աշխատանքների ճիշտ և հստակ կազմակերպմանը:

Ա. Տերտերյանը հավելեց, որ Կազմակերպության կենտրոններում սնունդ չի տրամադրվում, որը ամրագրված է 2015թ. սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում» 1112-Ն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված Հավելվածի 95-րդ կետով:

Ա. Մինասյանը ավելացրեց, որ վերոնշյալ գործառույթն որոշման մեջ միջակետով է նշված և այն, որպես պարտադիր պահանջ, չի կարող դիտարկվել:

Անդրադառնալով խնամք և սպասարկում իրականացնող ՊՈԱԿ-ների տիպերին՝ Նախարարը առաջնային համարեց վերոնշյալ տիպերի միացման գաղափարը՝ հստակեցնելով կյանքի դժվար իրավիճակում հայտնված ընտանիքների և վերջիններիս երեխաների հետ կապված բոլոր առարկայական խնդիրները, առաջնահերթությունները՝ անհրաժեշտության դեպքում մատուցվող ծառայությունների նկարագիրը դարձնելով միասնական:

Այնուհետև Նախարարը առաջարկեց Ս. Թադևոսյանին ներկայացնել «Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրի ամբողջական նկարագիրը և մատուցված ծառայությունների չափելի ու գնահատելի արժեքը, այդ թվում՝ ներգրավվող լրացուցիչ միջոցները ու ռեսուրսները՝ համապատասխան հաշվարկներով և նորմատիվներով:

Ս. Տերտերյանը ծառայությունների նկարագրին անդրադառնալով՝ նշեց, որ ծառայության նկարագրությունում չեն սահմանվել այն իրավական ակտերը, որոնցով Կազմակերպությունը պետք է առաջնորդվեր ծառայությունը մատուցելիս:

Լ. Հայրապետյանը պարզաբանեց, որ 2017թ. ծառայությունների նկարագրությունում իրավական ակտերի չներառված լինելը վիրպակի արդյունք է:

Հաջորդ խնդրին անդրադառնալով՝ Ս. Տերտերյանը նշեց, որ 2015թ. սեպտեմբերի 25-ի *Հայաստանի Հանրապետության կառավարության N 1112-Ն որոշման Հավելվածի* 97-րդ կետի համաձայն «97. Կենտրոնում երեխայի խնամքը տրամադրվում է նրա՝ գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան» և առաջարկեց խմբագրել 97-րդ կետը՝ հստակ պարզաբանելով թե ում կողմից պետք է իրականացվի սոցիալական կարիքների գնահատումը:

Հարցին ի պատասխան Ա. Մինասյանը նշեց, որ եթե ուղեգրումն իրականացվի թե Կազմակերպության կողմից գնահատված կարիքի հիման վրա և թե գործակալության կողմից, ապա երկու տարբերակներն էլ ընդունելի են: Կարիքի գնահատումը միանշանակ պետք է իրականացվի սոցիալական աշխատողի կողմից:

Ս.Թադևոսյանը նշեց, որ անհրաժեշտ է հստակեցնել կարիքի գնահատման մակարդակը, այսինքն՝ գնահատման խորության աստիճանը: Միաժամանակ հավելեց, որ երեխայի կարիքը գնահատվում է բազմամասնագիտական խմբի միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի «02. Աշխատաշուկայում անմրցունակ անձանց տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության

տրամադրում», «11. Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում», «16. Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում», «15. Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրերի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Շ. Հարությունյան, Թ. Ավետիսյան, Ս. Սահյան, Ա. Մանգասարյան,Ա. Մանվելյան)

Օրակարգի 2-րդ հարցին անդրադառնալով՝ Ս. Տերտերյանը ներկայացրեց, որ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման հավելված N 3-ով հաստատված 2-րդ կետի՝ աշխատանք փնտրող անձի հաշվառումը և հաշվառումից հանելն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում նրա փաստացի բնակության վայրն սպասարկող՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնը: Միաժամանակ հարկ է նշել, որ անձի բնակության վայրում հաշվառումը կարգավորվում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն որի ռեգիստրում ընդգրկվելու համար Հայաստանի Հանրապետության բնակիչը պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան տեղական ռեգիստրին տրամադրել իր մշտական բնակության վայրի հասցեն, ինչպես նաև սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անհատական տվյալները: Այնուհետև հավելեց, որ ուսումնասիրված ծրագրերում՝ համաձայն ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի ՏԲ-ում հաշվառված անձանց տվյալների նույնականացման արդյունքների, շուրջ 80 շահառուների հաշվառումը չէր համապատասխանում վերը նշված օրենքով սահմանված պահանջներին:

Այնուհետև Տերտերյանը առաջարկեց վերոնշյալ խնդրի կարգավորման նպատակով Զբաղվածության գործակալության տարածքային կենտրոններում գործող «Գործ» էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքում փոփոխություն կատարել:

Խնդրի առնչությամբ Նախարարն առաջարկեց Ա. Մանգասարյանին ներկայացնել դիրքորոշում «մշտական բնակության վայր» և «փաստացի բնակության վայր» հասկացությունների վերաբերյալ:

Հարցին ի պատասխան՝ Ա. Մանգասարյանը պարզաբանեց, որ նշված խնդիրը կարգավորվում է ծրագրի շահառու հանդիսացող անձանց փաստացի բնակության վայրի լիազոր մարմնի՝ համատիրության կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված տեղեկանքը, որի համապատասխան էլ իրականացվում է հաշվառումը «Գործ» տեղեկատվական համակարգում: Հետևաբար, «Գործ» էլեկտրոնային համակարգի տեխ-նիկական առաջադրանքում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Նախարարը նշեց, որ խնդիրը միանշանակ առկա է և վերոնշյալ օրենքի պահանջով մշտական բնակության վայրը փոխելիս անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել այն համայնքի տեղական ռեգիստրին, որտեղ գտնվում է նրա նոր կացարանը: Միաժամանակ հավելեց, որ վերոնշյալ խնդիրը արդեն իսկ կարգավորվել է ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկատվական համակարգում:

Ա.Մինասյանը նշեց, որ վերոնշյալ պահանջի չկիրառվելու փաստը խնդիր կառաջացնի ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկատվական համակարգի տեսանկյունից:

Հաջորդ խնդրին անդրադառնալով՝ Ս. Տերտերյանը նշեց, որ Ստեփանավանի և Վայքի զբաղվածության կենտրոններում հաշմանդամ շահառուների գործերում բացակայում էին վերականգնողական անհատական ծրագրերը (այսուհետ՝ ՎԱԾ): Հետևաբար, եթե ՎԱԾ-ը բացակայում է, ուրեմն կարիքների գնահատում չի կատարվել:

Ա.Մանգասարյանը նշեց, որ սեզոնային զբաղվածության ծրագրերի ժամանակահատվածում ծանրաբեռնվածության պատճառով որոշ շահառուներ ծրագրում ընդգրկվել են ԲՍՓԳ-ի կողմից տրված տեղեկանքների հիման վրա:

Թ. Ավետիսյանը ընդգծեց, որ այս հարցի հետ կապված բովանդակային խնդիր կա, այսինքն՝ ՎԱԾ-ում նշվում է հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային պայմանների և բնույթի ցուցվածությունը կամ հակացուցվածությունը և ըստ այդմ էլ՝ հաշմանդամ անձինք ներգրավվում են սեզոնային զբաղվածության համապատասխան աշխատանքներում: Հետևաբար վերջինիս բացակայության պարագայում հնարավոր չէ որոշել գյուղատնտեսական աշխատանքներում վերջինիս ցուցվածության կամ հակացուցվածության աստիճանը:

Վերոնշյալ խնդրին անդրադառնալով՝ Նախարարը առաջարկեց ամփոփ տեղեկատվություն ներկայացնել արձանագրված խախտումների վերաբերյալ՝ ծրագրերի և ըստ ՎԱԾ չունեցող շահառուների թվաքանակի:

Նախարարը հանձնարարեց Ս. Տերտերյանին ներկայացնել ամփոփ տեղեկանք տվյալ ծրագրերի համար նախատեսված ներքին աուդիտի ժամանակահատվածի և աուդիտի ընթացքում իրականացված փաստացի գործողումների ժամկետների մասին:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ

1. **Ընտանիքի, կանանց և երեխաների հիմանհարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետ Լ. Հայրապետյանին**

   Ներկայացնել առաջարկություններ 2015թ. հոկտեմբերի 29-ի «ՀՀ ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված խնամք և սպասարկում իրականացնող ՊՈԱԿ-ների հաստիքային միավորների չափորոշիչները հաստատելու և ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի N 730-Ն եվ N 815-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 1292-Ն որոշման մեջ և ըստ անհրաժեշտության նաև այլ իրավական ակտերում, ՊՈԱԿ-ների տիպերը միացնելով՝ ներկայացնել «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն»-ի չափորոշիչները, միաժանակ ՀՀ ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված խնամք և սպասարկում իրականացնող ՊՈԱԿ-ներում և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունում երեխաներին մատուցվող ծառայությունների նկարագիրը դարձնել միասնական՝ հաշվի առնելով կազմակերպության փորձը:

   Ժամկետ՝ 15 օր

2. **«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության նախագահ Ս. Թադևոսյանին՝**

Ներկայացնել «Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրի ամբողջական նկարագիրը և մատուցված ծառայությունների չափելի ու գնահատելի արժեքը, այդ թվում՝ ներգրավող լրացուցիչ միջոցները ու ռեսուրսները՝ համապատասխան հաշվարկներով և նորմատիվներով:

Ժամկետ՝20օր

3. **Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ՝ Ա. Մինասյանին և ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետ Լ. Հայրապետյանին՝**

Ներկայացնել առաջարկություններ 2015 թվականի հոկտեմբերի 17-ի Հայաստանի Հանրապետության կառավարության N 1112 որոշման Հավելվածի 97-րդ կետում փոփոխություն կատարելու մասին՝ հստակեցնելով սոցիալական կարիքների գնահատման ընթացակարգը:

Ժամկետ՝10 օր

4. **Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ Ա. Մինասյանին՝**

Ներկայացնել պարզաբանումներ երեխաների ուղեգրումների, սոցիալական կարիքները գնահատողների վերաբերյալ, հստակեցնել Կազմակերպության կողմից Գործակալության կամ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի հետ համագործակցության դաշտը և աշխատանքների համատեղ իրականացման շրջանակները, այդ թվում՝ հատման կետերը, համապատասխան փոփոխություններ կատարելով ՀՀ կառարավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության կառավարության N 1112-Ն որոշման մեջ և ներկայացնել վերջնական առաջարկություն:

Ժամկետ՝12օր

5. **Զբաղվածության պետական գործակալության պետ Ա. Մանգասարյանին՝**

Հիմք ընդունելով «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի սահմանված պահանջները՝ բացառել համատիրությունների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված տեղեկանքների հիման վրա աշխատանք փնտրող անձանց հաշվառելու գործընթացը՝ ըստ անհրաժեշտության ներկայացնելով օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ:

Ժամկետ՝10 օր

6. **Նախարարության ոլորտային ստորաբաժանումների ղեկավարներին, Զբաղվածության պետական գործակալության պետ Ա. Մանգասարյանին և ՀՀ ԲՍՓ գործակալության պետի տեղակալ Նունե Շահվերդյանին՝**

Ներկայացնել առաջարկություններ զբաղվածության ծրագրերում ընդգրկված հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրերում փոփոխություններ կատարելու մասին՝ համաձայնացնելով Նախարարի տեղակալների հետ:

Ժամկետ՝ 15 **օր**

7. **Նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյանին՝**

Ներկայացնել տեղեկանք ուսումնասիրվող ծրագրերի ներքին աուդիտի ընթացքում աուդիտորական առաջադրանքի կատարման ժամանակ գործողման մեջ գտնվելու ժամանակահատվածների մասին՝ ըստ վայրերի և ըստ ժամկետների:

Ժամկետ՝ 2 **օր**

Կոմիտեի նախագահ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կոմիտեի անդամներ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Շ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մ. ՍԱՀՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ